## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N **226**

13 «ապրիլ» 2026թ.

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | Համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊ ՁԲ-26-4/2» | 1 | Մարտկոց՝ AA տեսակի (ԱԿՄ 1,2V AA) | 4656000 | «ԱԷՅ» ՍՊԸ | 08302234 | ք. Երևան, Աղբյուր Սերոբի փողոց, շենք 11, բնակարան 59 | 30 «մարտ» 2026թ. | ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 02.03.2026թ. որոշմամբ «ԱԷՅ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել էր բավարար և ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով վերջինս ճանաչվել էր ընտրված մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ «ԱԷՅ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն «ԱԷՅ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, ուստի վերջինս հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի և ընթացակարգի հրավերի 9.5 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված | Առկա չէ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: | |

______________________

ստորագրություն

Կ. Տ.

**Կարեն Բրուտյան**